**«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ երաժշտության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով` գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում`

Հանձնաժողովի անունով գրավոր դիմում` նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև1/,

փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները,

ինքնակենսագրություն /Ձև 4/,

թափուր աշխատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

մեկ լուսանկար 3X4 չափի,

այլ պետությունների քաղաքացիները` ՀՀ-ում աշխատելու իրավունքը,

ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարությունը ԿԳՄՍՆ կայքում հրապարակվելու օրվանից մինչեւ 2021 թ. հունիսի 3-ը ներառյալ, ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի` Գավառի N5 հիմնական դպրոցում:

**Մրցույթը տեղի կունենա 2021 թ. հունիսի 8-ին, ժամը 11:00-ին, Գավառի N5 հիմնական դպրոցում:**

Հասցե` ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 4-րդ փակուղի N1:

Տեղեկությունների համար զանգահարել (0264)2-71-03 կամ (091)658560 հեռախոսահամարներով: